Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 19

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<21>> դեկտեմբերի 2021թ. ք. Երևան

2021 թվականի դեկտեմբերի 21-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ա. Պապյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ն. Թևոսյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը:

Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 5 հայտերի քննարկում:

1. Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիան և լիցենզիայի ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ 07.12.2021թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11007 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ 07.12.2021թ. դիմումը՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11007 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին դիմումը և դիմումին կից ներկայացված՝ ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացման ՏՖ N 11007 լիցենզիայի և N 00001 ներդիրի բնօրինակները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ ԶՈՀՐԱԲՅԱՆ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.Քննարկվեց՝

«ՏԵԽԶՆՆՈՒՄ-1» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի նոյեմբերի 25-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի նոյեմբերի 25-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 03.12.2021թ. թիվ ԱՍ/25.1/31059-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա.ներկայացված դիմումը սխալ է ձևակերպված: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրվում են գործունեության տեսակի լիցենզիա և ներդիր՝ հայցվող հոսքագծի տեսակի համար,

բ.բացակայում է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված հայտը՝ համաձայն N 1 ձևի,

գ.բացակայում է Արմավիր քաղաքի Երևանյան փողոց 56 հասցեում գտնվող տեխնիկական զննության անցկացման համար նախատեսված տարածքի հատակագիծը, ինչը հնարավորություն չի ընձեռում փաստաթղթային եղանակով ուսումնասիրելու արտադրական տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 11-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգով սահմանված պահանջներին,

դ. հայտին կից փաստաթղթերում առկա չեն ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցների, մասնավորապես՝ դողերի ճնշաչափերի, ղեկային վարման համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցների, շարժիչի և դրա համակարգերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցներից՝ ծխաչափի և հոսաորոնիչի, տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման համար նախատեսված ստենդի, թվային տեսախցիկի վերաբերյալ Կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը,

ե.հայտին կից ներկայացված՝ «BEM MULLER» ընկերության արտադրության հոլովակավոր ստենդի համար ներկայացված փաստաթուղթը հնարավորություն չի ընձեռում նույնականացնել սարքավորման արտադրողի կողմից փորձաքննության արդյունքները և նրանց համապատասխանությունը Կարգի պահանջներին:

զ. հայտին կից փաստաթղթերում բացակայում են տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման չափման միջոցների՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացնող՝ չափագիտության լիազոր մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները:

արտադրական տարածքի հատակագծի, արգելակային համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցի, դողերի ճնշաչափերի, ղեկային վարման համակարգի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցների, շարժիչի և դրա համակարգերի տեխնիկական արատորոշման պարտադիր միջոցներից՝ ծխաչափի և հոսաորոնիչի, տրանսպորտային միջոցների ղեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման համար նախատեսված ստենդի, թվային տեսախցիկի վերաբերյալ տեղեկատվության բացակայության մասին:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Հայտատուն լիազոր մարմնից 13.12.2021թ. ստացել է ներկայացված փաստաթղթերի բնօրինակները, սակայն օրենքով սահմանված ժամկետներում չի վերացրել հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՏԵԽԶՆՆՈՒՄ-1>> ՍՊԸ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի ցանկ N 2-ով սահմանված պահանջներին: «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 5-րդ մասով ենթակա են մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր ՆԵԼԼԻ ՕՎՉՅԱՆԻ /այսուհետև՝ Հայտատու/ 2021 թվականի դեկտեմբերի 1-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի դեկտեմբերի 7-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 14.12.2021թ. թիվ ԱՍ/25.1/32187-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա.բացակայում է ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 2-րդ ենթակետով սահմանված՝ Ա/Ձ Նելլի Օվչյանին տրամադրված տեխնիկական զննության համար նախատեսված արտադրական տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը,

բ.բացակայում է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված տեխնիկական զննության անցկացման գործունեությամբ զբաղվելու համար օգտագործվող ապրանքների, առարկաների, սարքավորումների փորձաքննության դրական եզրակացությունը կամ ապրանքների, առարկաների ու սարքավորումների վերաբերյալ օտարերկրյա պետությունների կամ կազմակերպությունների կողմից տրված փորձաքննության դրական եզրակացությունը:

գ. հայտին կից փաստաթղթերում բացակայում են տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման չափման միջոցների՝ «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքով սահմանված կարգով չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացնող՝ չափագիտության լիազոր մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Հայտատուն լիազոր մարմին գրությունը ստանալուց հետո գրությամբ նշված կոնտակտային համարով 14.12.2021թ. կապ է հաստատել լիազոր մարմին հետ, ստացել լրացուցիչ պարզաբանումներ, սակայն օրենքով սահմանված ժամկետներում չի վերացրել հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱՁ ՆԵԼԼԻ ՕՎՉՅԱՆ	0 կողմ, 6 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի ցանկ N 2-ով սահմանված պահանջներին: «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով և 5-րդ մասով ենթակա են մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3.Քննարկվեց՝

«ՍՄԱՐՏ-ՍԵԼԼ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի դեկտեմբերի 8-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի դեկտեմբերի 8-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 14.12.2021թ. թիվ ԱՍ/25.1/32363-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝ ՀՀ կառավարության N 1565-Ն որոշման հավելվածի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական զննության կայաններում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության ժամանակ դրանց վիճակի ստուգման համար օգտագործվող տեխնիկական արատորոշման միջոցներից դողերի ճնշաչափերի և կոմպրեսորի վերաբերյալ տեղեկատվության բացակայության մասին:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Հայտատուն 15.12.2021թ. 62541-2021 գրությամբ վերացրել է հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՍՄԱՐՏ-ՍԵԼԼ>> ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4.Քննարկվեց՝

«ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽԶՆՆՄԱՆ ԿԱՅԱՆ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի նոյեմբերի 30-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի նոյեմբերի 30-ին և դեկտեմբերի 3-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 13.12.2021թ. թիվ ԱՍ/25.1/31461-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝ արտաքին լուսավորման սարքերի տեխնիկական արատորոշման միջոցի վերաբերյալ չափագիտության ազգային մարմնի կողմից տրամադրված թիվ 055852 ստուգաչափման վկայականի և ներկայացված տեխնիկական անձնագրի անհամապատասխանության մասին:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Հայտատուն 15.12.2021թ. 60671-2021 գրությամբ վերացրել է հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները՝ ներկայացնելով ուղղված ստուգաչափման վկայական:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽԶՆՆՄԱՆ ԿԱՅԱՆ» ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

5.Քննարկվեց՝

«ԱՎՏՈՊՈՍ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի դեկտեմբերի 13-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի դեկտեմբերի 13-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հայտատուի կողմից ներկայացված տարածքում ուսումնասիրվել է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը տեխզննման համար ներկայացված շինությունում:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՎՏՈՊՈՍ» ՍՊԸ	6 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան